

բ/ ծեսը կատարվում է առազաստից առաջ, որտեղ նույնությամբ կրկնվում է արյուն-զոհ-նոր կյանքի ծնունդ շղթան.

գ/ զոհի արյամբ բուժվում են հիվանդներն ու պողաբերվում ամուլ կանայք.

դ/ փեսի ծառի ստեղծման ու զոհաբերության ծեսերը կատարում են միայն ազապները՝ քավորի գլխավորությամբ.

ե/ ծիսական մեծ շուրջպարը /որին համախ մասնակցում է ամբողջ գյուղը՝ բացի հարսնատերերից /գլխավորում է դարբինը, որը կապվում է ամպրոպի ու կայծակի հետ՝ հովանավորելով փեսի ծառն ու խափանելով շար ուժերը, հմտ. դիցաբանական դարբնի կայծակնային հատկությունների հետ/.

զ/ փեսի ծառի եռամասնությունը և նրա զազաթին թռչնի կամ նրա խորհրդանիշը դարձած փետուրների առկայությունը մեկ անգամ ևս հաստատում է ծառի տիեզերական բնույթը և հենց այդպիսի ծառի հետ դարբնի ունեցած կապը: Եթե ծեսում քավորը կապվում է փեսի ծառի հետ և հովանավորում ավյալ նորաստեղծ քնտանիքի պողաբերությունը, ապա դարբինը կարծես հովանավորում է ամբողջ համայնքը:

է/ ծեսի ամբողջ քնթացքում հնչող զուռնա-դհոլի երաժշտությունը ևս հանդես է գալիս որպես պողաբերությունն ու կյանքի ծնունդը հովանավորող շարխափան ուժ:

6. Հարսանեկան ծեսի տարբեր փուլերում հավի գլուխներ պոկելու կամ օղում սրով թոցնելու սովորությունը տարածված է եղել Հայաստանի տարբեր շրջաններում /,,Հավթուռկ,, , ,Փեսի որս,,/:

7. Ծեսի վերափոխված տարբերակներից մեկը մինչև 1960-ական թվականները պահպանվելիս է եղել Ադրբեջանական ՍՍՀ Դաշքեսանի /Քարհատի/ շրջ. Բանանց գյուղում /պատմական Ուտիք/՝ որպես նորակողիկների սվիրազործման ծես: Ծառ-զոհ-առևակասություն-նոր կյանքի ծնունդ /մի դասից մյուսին անցնելը/ գաղափարը կրկնվում է նաև սվիրազործման ծեսում, որը գուցե և թազվորագովքի վերոհիշյալ ծեսի տարբերակի հեռավոր արձագանքներից է:

Ա.Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՔ

ՀԱՅ ԿՈՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԳԵՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՑԻ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՑԻ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Հայկական գորգագործության և կարպետագործության պատմության

ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունի հումքի մշակման տեխնոլոգիայի և գործելու տեխնիկայի հետ կապված հարցերի քննությունը, որի հնարավորությունն քննարկում են միջևդարձան գրավոր աղբյուրները, հնագիտական գտածոները և այդ ամենի՝ ազգագրական առումով բաղադրական դիտարկումը:

2. Գրավոր աղբյուրների հաղորդումները /առաջ պատմիչ-աշխարհագրագետներ ավ-Մասուղի, իբն-Ռուստե, աս-Սաալիբի և այլն/ վկայում են, որ IX - XI դդ. ծաղկում ապրած հայ գորգագործության տեխնիկան և գեղարվեստական լավագույն հատկանիշները պայմանավորող գործոնների թվում առաջնակարգ տեղ են զբաղեցրել բուրդը և ներկանյութերը: Պատմական Հայաստանի հարավ-արևմտյան նահանգներին բարձրորակ բուրդ է արտահանվել Միջագետք: ,Որդան, կարմիրը հայկական գորգերի հոմանիշ է համարվել /հմտ. դրա արաբերեն ,կրմրգ, անվանումից առաջացած ,Մակրիգիի, հետ/:

3. Բարձրորակ հումքից բացի, գորգերի և կարպետների արժանիքները պայմանավորված են նաև գործելու տեխնիկայով: Հայտնի է, որ ոստայնակություն մեջ XIX - XX դդ. Հայաստանում հիմնականում օգտագործվել է ուղղահայաց հաստոց /տորք, ոստան, հանա և այլն/, իսկ միջնադարին բերող է եղել դրա հորիզոնական տարբերակը /վ. թեմուրմյան. Ս.Գավթյան/: Եղած ավյալները թույլ են տալիս նկատելու, որ արդեն XIV - XV դդ. Հայաստանում հայտնի էր ուղղահայաց հաստոց: Սիսիանի շրջանի Որոտան գյուղի շրջակայքում գտնվող սապաղաքարերից մեկի վրա / XV դ. / պատկերված վերոհիշյալ տորքը և գորգագործի մյուս գործիքները /կտուսիչ, կոփիչ/ դրա վկայություններին են: Այդ և XII - XIV դդ. գրավոր աղբյուրներից հայտնի ոստայնակության հետ կապված մի շարք անվանումներ /տորք, ոստան, կկոց, կոփիչ, սսպ, տամակ, առեջ և այլն/ XIX - XX դդ. Հայաստանի գորգագործական կենտրոններում կենցաղավարելու փաստը մատնանշում են միջնադարյան ավանդույթների հարասելը մինչև մեր ժամանակները:

4. Գորգի գործվածքը բավականին բարդ է: Այն կազմված է հենքից, միջնաթելից և հանգուցաթելից: Այս երեք թելերի որակից, դրանց մանվածքից, տեսակից էապես կախված է գորգի որակը: Միջևդարին վերաբերվող նմուշները թույլ են տալիս եզրակացնելու, որ հայկական գորգագործության մեջ որպես հենք օգտագործվել է բրդե և բամբակե թելը, որպես միջնաթել և հանգուցաթել՝ բրդե թելը /սակավ դեպքերում որպես հանգուցաթել՝ նաև մետաքսաթելը/:

5. Այդ նույն նմուշները ուսումնասիրությունը ցույց է տա-

լիս, որ Հայաստանում գորգագործութեան մեջ տիրապետող է եղել հանգույցի, «կրկնակի», տեսակը: Բազմազան են կարպետներ գործելու եղանակները: Կարպետների պահպանման հնագույն /XVII - XVIII դդ./ նմուշների համադրումը XIX - XX դդ. օրինակների հետ հարավորութիւն է ցնձեռում որոշակի պատկերացում կազմելու կարպետ գործելու և դրանք գեղագործելու եղանակների մասին: Հայաստանում հիմնականում տարածված է եղել այսպես կոչված «,երկերես», կարպետի տիպը /պատկերները երկու կողմից հավասարապես դիտելի են/: Բացի դրանից, պատմական Հայաստանի գրեթե բոլոր պատմա-ազգագրական շրջաններում հայտնի են եղել կարպետ գործելու և գեղագործելու այսպես կոչված «,օղամիտ», և «,շուլալ կար», եղանակներն ու դրանց տարբերակները /պատկերները հասկերեն դիտվում են միայն մի կողմից/:

6. Այսպիսով, պարզվում է, որ XVIII - XX դդ. կենցաղավարած գորգագործութեան և կարպետագործութեան տեխնոլոգրայի և տեխնիկայի ավանդույթների ակուսքներն ուսեն միջնադարյան ծագում:

Ա. Հ. ԳՈՂՈՍՅԱՆ

ՀԱՔ

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՆ ԵՎ ՄԳՈ ՀԱՆԻԵՐԾԱՆՔԻ ԲՆՈՒՑԱԳՐԱՆ ՓՈՐՉ

/ XIX դ. վերջ - XX դ. սկիզբ /

Հայ ազգագրութեան ուշագրավ և տակավին չլուսաբանված խնդիրներից է ժողովրդական մշակութի բաղադրիչներից մեկի՝ ավանդութային տարազի տեսնապան համալիրի, մասնավորապես թաղման և սգո հանդերձանքի պատմա-ազգագրական ուսումնասիրութիւնը:

Ներկա հաղորդմամբ փորձ է արվում հրապարակի վրա եղած ազգագրական, հնագիտական, մատենագրական և բանահյուսական սակավաթիվ, բայց հույժ արժեքավոր նյութերը, հեղինակի Շամշադինի, Իջևանի, Սիսիանի շրջաններում և Լենինական քաղաքում 1983-1985 թթ. գրառած դաշտային ազգագրական նյութերի հետ համադրելու միջոցով, որոշակի պատկերացում տալ թաղման և սգո հանդերձանքի, դրանց առանձնահատկութիւնների և ցուրտհարութիւնների վերաբերյալ տարբեր պատմա-ազգագրական շրջաններում, բացահայտել առանձին զգեստների դերն ու նշանակութիւնը թաղման ծեսերի համակարգում:

1. Համաձայն XX դ. սկզբի ազգագրական նյութերի, Հայաստանի